Տասնմեկերորդ հաղորդում

Դավիթը և Աբիգեան պատերազմող Քրիստոսի և պատերազմող եկեղեցու նախատիպն են

Գրվածքների ընթերցում. Ա Թգ 25:2-42, Եփս 5:25-27, 6:10-13, Հյտ 19:7-9, 11-21, Եբր 6:19, 10:19-20, 13:13

I. Ա Թգ 25:1բ-44-ը Նաբալի և Աբիգեայի հանդեպ Դավթի գործողությունների գրառումն է.

Ա. Այս գլխում տեսնում ենք Դավթին հանգստացնելու հարցում Աբիգեայի ցուցաբերած իմաստությունը՝ խխ. 23-31:

Բ. Դավիթն արձագանքեց Աբիգեայի խնդրանքին՝ օրհնելով Եհովային, ով նրան ուղարկեց՝ դիմավորելու իրեն, ինչպես նաև օրհնելով նրան, ով իրեն հետ պահեց արյունահեղություն անելուց և իր ձեռքով իր համար վրեժխնդիր լինելուց՝ խխ. 32-35:

Գ. Աբիգեայի գեղեցկությունն ու իմաստությունը գերեցին Դավթին, իսկ Նաբալի մահից հետո նա նրան կնության վերցրեց, և նա պատերազմում Դավթի զույգը դարձավ՝ խխ. 36-44:

II. Դավիթը չարչարանքների միջավայրում պատերազմող Քրիստոսի նախատիպն է՝ խ. 28.

Ա. Դավիթը Տեր Հիսուսի՝ որպես երկրի վրա Իր չարչարանքի մեջ Իր հարությունից առաջ եղող մարդու նախատիպն է. Դավթի չարչարանքը բռնազավթող թշնամիներին հաղթելու և բարի երկիրը՝ Աստծու կառույցի տարածքը, ձեռք բերելու համար էր՝ Սղմ 69:1-9:

Բ. Այն, որ Աստված հաստատում էր Դավթին, երևում է փղշտացիների հանդեպ նրա կրկնվող հաղթանակներից. ուստի նա պատերազմող Քրիստոսի նախատիպն է՝ Բ Թգ 5:17-25:

Գ. Քանի որ Եհովան մեզ համար ճակատամարտ մղող ու մեր բոլոր թշնամիներին հաղթող Ռազմիկն է, Նա մեր հաղթարշավն է, մեր հաղթանակը՝ Ելց 17:8-16:

Դ. Սղմ 110:5-6 խոսքերը բացահայտում են, որ ի հավելում Թագավոր և Քահանա լինելուն՝ Քրիստոսը Ռազմիկն է.

1. Քրիստոսն Իր վերադարձի ժամանակ՝ Իր բարկության օրը, կլինի մեծագույն Հաղթողը՝ հաղթելով բոլոր ազգերին, կոտորելով թագավորներին և թշնամիների գլուխը և դատելով բոլոր նրանց, ովքեր հակառակում են Իրեն՝ խխ. 1-2, 5-6:
2. Ըստ Հյտ 19:11-14-ի՝ Քրիստոսն Իր վերադարձի ժամանակ կլինի Մարտնչողը.
   - ա. Տերը միայնակ չի մարտնչի Հակաքրիստոսի և ազգերի զորքերի դեմ:
   - բ. Քրիստոսը կգա Իր հարսի հետ որպես Իր զորքի, և նրա հետ Նա կմարտնչի Հակաքրիստոսի և նրա զորքերի դեմ՝ խխ. 7-9:

Ե. Քրիստոս-Ռազմիկը հաղթական Քրիստոսն է՝ Հվի 12:31, Եփս 4:8, Եբր 2:14.
   1. Հաղթական Քրիստոսն Իր երկրային սպասավորության ընթացքում հաղթեց բանսարկուին ու ոչնչացրեց նրա գործերը՝ Մտթ 4:1-11, Ա Հվի 3:8:
   2. Հաղթական Քրիստոսն Իր խաչելությամբ դուրս գցեց այս աշխարհի կառավարչին, ոչնչացրեց բանսարկուին, թոթափեց ղեկավարություններն ու իշխանությունները և ի չիք դարձրեց մահը՝ Հվի 12:31, Մտթ 27:51, Եբր 2:14, Կոս 2:15, Բ Տմթ 1:10:
   3. Հաղթական Քրիստոսի հարությունը հռչակում է, որ Նա հաղթել է մահին՝ 2:8:
   4. Հաղթական Քրիստոսն Իր համբարձմամբ «գերեվարվածներին գերության տարավ». Նա մեզ ազատեց Սատանայի բռնազավթիչ ձեռքից ու բերեց տիեզերքի ամենաբարձր տեղը՝ Եփս 2:6, 4:8:
   5. Հաղթական Քրիստոսը կգա որպես մարտնչող Զորավարը՝ Ռազմիկը, Արմագեդոնում Իր զորքով մարտնչելու Հակաքրիստոսի, նրան ենթակա թագավորների և նրանց զորքերի դեմ՝ Հյտ 19:11-21:

III. Աբիգեան չարչարանքների միջավայրում պատերազմող եկեղեցու նախատիպն է՝ Ա Թգ 25:2-42.

Ա. Ա Թգ 25-ից սկսած՝ Աբիգեան միշտ Դավթի՝ ռազմիկի կողքին էր ու նրա պատերազմների ժամանակ հետևում էր նրան՝ խխ. 40-42.
   1. Աբիգեայի ամուսնությունը Դավթի հետ այն բանի նախատիպն է, որ եկեղեցին զորակոչվում է որպես զորք պատերազմի համար՝ Եփս 6:10-20:
   2. Աբիգեան պատերազմող եկեղեցու նախատիպն է, որը չարչարանքների միջավայրում մարտնչում է Աստծու թագավորության համար՝ Հյտ 1:9, 11:15,12:10:

Բ. Աբիգեան՝ որպես նախատիպ, պատկերում է այն, որ մենք պետք է Քրիստոսի հետ մեկ լինենք Իր չարչարանքների մեջ՝ Փլպ 3:10, Կոս 1:24, Հյտ 1:9.
   1. Քրիստոսի նեղությունները երկու կարգի են. նեղություն փրկագնում կատարելու համար, որը Քրիստոսն Ինքն իրագործեց, և նեղություն եկեղեցին կառուցելու համար, որոնք առաքյալներն ու հավատացյալները պետք է լրացնեն՝ Կոս 1:24:
   2. Այն փաստը, որ Պողոսը հիշատակում է Քրիստոսի նեղությունները՝ կապված Աստծու տնտեսվարության հետ, ցույց է տալիս, որ տնտեսվարությունը միայն չարչարանքի միջոցով կարող է իրագործվել՝ խ. 25.
      ա. Եթե մենք ուզում ենք բաժին ունենալ Աստծու տնտեսվարության մեջ, պետք է պատրաստ լինենք չարչարվելու՝ Հյտ 1:9, Բ Կրթ 1:3-6:
      բ. Բոլոր նրանք, ովքեր մասնակցում են եկեղեցու ծառայությանը

կամ սպասավորությանը, պետք է պատրաստ լինեն հաղորդ լինելու տնտեսվարի նեղություններին. սա նշանակում է, որ մենք պետք է պատրաստ լինենք վճարելու ցանկացած անհրաժեշտ գին՝ մեր տնտեսվարությունը կատարելու համար՝ 4:10-12, Հվի 12:24-26:

Գ. Աբիգեան՝ որպես նախատիպ, պատկերում է այն, որ եկեղեցին Տեր Հիսուսի հետ մասնակցում է հոգևոր պատերազմին՝ Եփս 6:10-20.

1. Եկեղեցին՝ որպես Քրիստոսի զույգը, Նրա հարսը, բացահայտվում է Եփս 5:25-27-ում, և այս զույգը Եփս 6:10-13-ում դառնում է ռազմիկը, մարտիկը.
   ա. Եփս 5 և 6-րդ գլուխները կկատարվեն Հյտ 19-րդ գլխում:
   բ. Հաղթողների ամբողջությունը դառնում է հարսը, որպեսզի լինի Քրիստոսի զույգը (խխ. 7-9), և այս զույգը դառնում է Քրիստոսի զորքը, որպեսզի Արմագեդոնում հաղթի Հակաքրիստոսին՝ խխ. 11-21:
2. Ոչ միայն Աստծու հավիտենական նպատակը պետք է կատարվի, և Նրա սրտի ցանկությունը բավարարվի, այլև Աստծու թշնամին պետք է հաղթվի. դրա համար եկեղեցին պետք է ռազմիկ լինի՝ Եփս 1:11, 3:9-11, 6:10-12:
3. Հոգևոր պատերազմն անհրաժեշտ է, քանի որ Սատանայի կամքն Աստծու կամքին հակառակ է՝ Մտթ 6:10, 7:21, Եսյ 14:12-14.
   ա. Հոգևոր պատերազմի աղբյուրն աստվածային կամքի և սատանայական կամքի հակամարտությունն է:
   բ. Մեր՝ որպես եկեղեցու մարտնչելու նպատակը սատանայական կամքը ենթարկելն է և Աստծու թշնամուն հաղթելը՝ Հյտ 12:11:
4. Սատանան սարսափում է եկեղեցուց՝ որպես Քրիստոսի Մարմնից, իր դեմ և իր թագավորության դեմ մարտնչող ընդհանրական ռազմիկից՝ Երգ 6:10, Եփս 6:10-20:
5. Քրիստոսն ամուսնանալու է նրա հետ, ով տարիներ շարունակ ճակատամարտ է մղել Աստծու թշնամու դեմ՝ Հյտ 19:7-9, 11-16:
6. Հաղթողները, որոնցից կազմված է Քրիստոսի հարսը, ճակատամարտ են մղում Աստծու բոլոր թշնամիների դեմ և հաղթում նրանց, որպեսզի բերեն Աստծու թագավորությունը՝ 2:7, 11, 17, 26, 3:5, 12, 21,11:15, 12:10:

IV. Աբիգեան՝ որպես նախատիպ, ներկայացնում է մի հավատացյալի, ով դուրս է գնում առ Հիսուսը՝ բանակատեղից դուրս, կրելով Նրա նախատինքը՝ Եբր 13:13.

Ա. Մեր քրիստոնեական կյանքը երկու տեսանկյուն ունի՝ ներքին և արտաքին՝ Եբր 6:19-20, 13:13.

1. Ներքին տեսանկյան նախատիպը Սուլամիթան է, իսկ արտաքին տեսանկյանը՝ Աբիգեան՝ Երգ 6:4, 10, 13, Եբր 13:13:
2. Մի կողմից՝ մենք վարագույրի ներսի կողմում ենք՝ Սրբությունների

Սրբությունում. մյուս կողմից՝ մենք քաղաքից՝ բանակատեղից, դուրս ենք՝ մարդկանց առջև՝ Եբր 6:19-20, 13:13.

ա. Ներքուստ մենք վայելում ենք հարություն առած Քրիստոսին, իսկ արտաքուստ՝ հետևում Հիսուսին՝ 6:19, 13:13:

բ. Երբ մենք ներքին սենյակում՝ Սրբությունների Սրբությունում, գաղտնի տեղում, հպվում ենք Տիրոջը, մեզ կարելի է նմանեցնել Սուլամիթային՝10:19–20, Երգ 1:4, 4:10, 6:13:

գ. Երբ մենք մեր արտաքին ապրելակերպով վկայություն ենք տալիս Տիրոջ համար և աշխատում Տիրոջ համար, մեզ կարելի է նմանեցնել Դավթի հետ անապատում թափառող Աբիգեային՝ Ա Թգ 25:40-42:

Բ. Մենք կարող ենք ամեն օր փորձառաբար ապրել այս երկու տեսանկյունները՝ Եբր 6:19-20, 10:19-20, 13:13.

1. Մենք վարագույրի ներսի կողմում Սուլամիթայի պես ապրում ենք Սրբությունների Սրբությունում և վայելում հարուցանված ու փառավորված Քրիստոսին, և մենք Աբիգեայի պես բանակատեղից դուրս ապրում ենք աշխարհում և հետևում խոնարհ Հիսուսին՝ 6:19-20, 13:13:
2. Սուլամիթայի ու Սողոմոնի պես մենք մնում ենք փղոսկրե պալատներում և ներքուստ Տիրոջ հետ հաղորդակցվում, և Աբիգեայի պես մենք արտաքուստ ապրում և աշխատում ենք՝ հետևելով Դավթին առ պատերազմ և չարչարանք՝ Սղմ 45:8, Ա Թգ 25:40-42:
3. Մեր ներսում եղող Անձը հարություն առած Քրիստոսն է, իսկ արտաքուստ եղող Անձը Նազարեթցի Հիսուսն է՝ Հյտ 1:17-18, Մտթ 2:23:
4. Ներքուստ մենք գաղտնի տեղում ունենում ենք Սուլամիթայի վայելքը, իսկ արտաքուստ՝ Աբիգեայի հրապարակային ապրելակերպը:

Գ. Երբ Քրիստոսին հավատացողը դուրս է գալիս վարագույրի ներսից՝ հաղորդակցության ներքին սենյակից, նա կարողանում է բռնել խաչի ճանապարհը և հետևել չարչարվող Հիսուսին՝ Եբր 6:19, 10:19-20, 13:13.

1. Միայն նրանք, ովքեր ներս են մտնում վարագույրից, կարող են դուրս գնալ դեպի Հիսուսը՝ բանակատեղից դուրս, և կրել Նրա նախատինքը՝ 6:19, 10:19-20, 13:13:
2. Մեր մեջ հարություն առած Քրիստոսն է, որ մեզ առաջնորդում է հետևելու չարչարվող Հիսուսին՝ խ. 13:
3. Տեր Հիսուսը քայլել է խաչի ճանապարհով ու մտել հարության մեջ, և հիմա Նա առաջնորդում է մեզ՝ Իր Աբիգեային, ընդունելու խաչի ճանապարհը և հետևելու Իրեն բանակատեղից դուրս՝ կրելով Իր նախատինքը՝ խ. 13:

© 2021 Living Stream Ministry